

մուտ են մասնագիտական առևտրական կուրսեր, որոնց նպատակը պէտք է լինի աշակերտներին բարձրագույն առևտրական կրթութիւն տալ:

ՄԵՂՐԻԿ մեղ գրում են «Այժմ մեղ մօտ թիկնու տերերի մեծ պակասութիւն կայ» Նորեմբեր տերերի մի բեռ 2 բուրլուց բարձրացաւ մինչև 8, նոյն իսկ մինչև 10 բուրլու դա մի չը լաված գին է մեղանում: Տերերի այդ թանկութիւնը նրանով են բացատրում, որ գիւղացիք չերամի սերմը համեմատելով աւելի մեծ քանակութեամբ են վերցնում ու չերամի բոժոժ դուրս բերում, քան թէ կայ թիկնու տերեր չերամի որդը կերակրելու համար: Եւ երբ, ինչպէս այս տարի, չերամը աւելի աճող է լինում, ուրեմն աւելի մեծ քանակութեամբ տերեր է սպաւում, քան թէ կարելի է ձեռք բերել նոյն գիւղում և նրա շրջակայքում:—այն ժամանակ առաջ է գալիս տերերի թանկութիւնը:

Մեղ գրում են Մեղրիից որ ապրիլի վերջերից մինչև մայիսի 15-ը այդտեղ անդադար, համարեա ամեն օր, յորդ անձրևներ էին տեղում, որի հետևանքն այն էր, որ Մեղրիի գետը հեղեղելով, մեծ վնաս հասցրեց բամբակի արտերին:

Անդրկովկասի մի քանի տեղերում մորեխ երևեցաւ: Տեղական ուսուցիչները հաղորդում են, որ մորեխի երևեցած տեղերում կարգադրութիւն է եղած կոտորել այդ վնասակար հիւրերին: Կողի գիւղի կողմերում մորեխի կոտորելը աճող կերպով է առաջ գնում:

Մայիսի 25-ին 26-ին և 27-ին Ռուսաստանի փոստը չէր ստացվել թիֆլիսում, որովհետև կովկասեան սարերի վրա անցնող ճանապարհները վերջին օրերումս եկած յորդ անձրևներից փչացել էին:

Մեղ խնդրում են տպել հետևեալը: «Վաղը, կիրակի, ամիս 29-ին, քաղաքային խորհրդի դահլիճում նշանակված է կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը՝ ընկերութեան անցեալ 1887 թվականի գրամական ելուստերի հաշիւները քննելու և վերաստուգող յանձնաժողով ընտրելու համար»:

Անցեալ համարում հաղորդեցինք ընթերցողներին, որ վաղը, կիրակի, մայիսի 29-ին թիֆլիսի Ս. Նշան եկեղեցու ծխական դպրոցում լինելու է տարեկան հաշիւառութիւն և աւարտող աշակերտների պարգևաբաշխութիւն: Այժմ մեղ խնդրում են յայտնել, որ այդ հանդիսի սկիզբը լինելու է ոչ թէ 11 ժամին, այլ 10 ժամին առաւօտեան:

ԵՐԵՎԱՆԻՑ մեղ գրում են «Թէ որքան ապականված է մեր գիւղացիների բարք ու վարքը՝ կարող է ապացույց լինել այն հանգամանքը, որ մեր նահանգի գիւղացիների մէջ, շատ անգամ չնչին վէճի պատճառով ահապին վնաս հասցնելով իր հակառակորդին՝ սովորական բան է համարվում մեղանում: Հարկանքները միմեանց դէմ կը թշնամանան թէ չէ, —անմիջապէս, գիշերը հասնելուն պէս, սկսում են վրէժխնդրութիւնից միմեանց այդինքը կտրտել, միմեանց խաղողի որթերը կրակ տալ, միմեանց դէգերը այրել և այլն: Ահա մեր նահապետական, անարատ գիւղական ազգաբնակչութեան քարոյականութիւնը: Այդ տեսակ երևոյթների անթիւ, անհամար օրինակներ կարելի էր բերել»:

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ ստացանք հետևեալ լուրը: «Մայիսի 23-ին, երեկոյան ժամը 7-ին վախճանվեցաւ Ալեքսանդրօպոլում հայ-կաթօրիկ վարդապետ, գերապատիւ Ալեքսանդր Արարատեան: Հանգուցեալը յայտնի էր, որպէս հայասէր վարդապետ, բացի սրանից գուցէ շատերը չը գիտեն, որ նա է «Նին քաղաք» հուշակաւոր և հայերի մէջ ամեն տեղ տարածված երգի հեղինակը»:

Հաստատ աղբիւրներից լուր է հնք, որ առաջիկայ հինգշաբթի, համբարձման օրը, Բաթիֆի մահւան քառասունամայ օրին, խօջիվանքի գերեզմանատանը հանգուցեալի գերեզմանի վրա կը կատարվի հանդիսաւոր հոգեհանգիստ:

Խօսքովի գործը այժմս աւելի արագ է ընթա-

նում, ամիս 26-ին վերջացաւ վիսնիկի հարցաքննութիւնը, երէկ, ամիս 27-ին, սկսեցին կարգաւ սկզբնական քննութեան ժամանակ տուած այն վիսնիկի ցուցմունքները, որոնք օրինական պատճառներով չէին ներկայացել դատաստանին: Երբի այսօր կը սկսվեն վիճաբանութիւնները և վաղը կը յայտնվի վէճերը:

Վերջին օրերս եկած անձրևները, ինչպէս հաղորդում են տեղական ուսուցիչները, մեծ վնասներ են տուել երկրթութեանը: Չնայած էր մի քանի կամուրջներ, ինչպէս Բաղրի գծի վրա գտնվող Հասան-սուի և Տանա գետակների վրա անցրած կամուրջները և Բաթիֆի գծի վրա գտնվող Մցիսիթի մօտ Զեպալի և Գօրիի նոր կամուրջները: Այդ վնասների պատճառով գնացքները բաւական ուշանում են, իսկ ապրանքների գնացքները բոլորովին չեն բանում:

«Перед. Газета» արգիւրը հետևեալ մանրամասնութիւններ է հաղորդում թիֆլիսի գանձապահի օգնական խմբի միջոցով: Բիւջայում կալանաւորելու մասին: «Չը նայելով, որ պոլիցիան ընդօգնեալ բուրգան երկրթութեան կայարանը խիստ հսկողութեան տակ էր պահում, խմբի միջոցով ամենամիջին աշխույժեցաւ Ռիզա հասնելուն պէս անկատելի կերպով քաղաք գնաց: Մի երիտասարդ մարդու ընկերակցութեամբ, որի հետ ծանօթացել էր ճանապարհին, նա հասաւ «Պարկ» անվան խմբի մօտ, ուր նրանք իրենցից զանազան սենեակներ ներումս խմբի, չը ներկայացնելով իր թղթերը, հիւրանոցի գրքում ստորագրեց «բարձր Միւլլեր» անունով: Զիւրանոցի տէրերին և ծառաներին իմաց էր տրված խմբի միջոցով հնարաւորութեան մասին, և պոլիցիան հաղորդել էր նրանց խմբի միջոցով: Նշանները և հարկաւոր հրահանգներ էր տուել նրանց: «Պարկ» հիւրանոցի ծառաներից մէկը նկատում է, որ հիւրանոցում իրենցանք եկուրները մէկը խմբի միջոցով նշաններն ունի և իսկոյն իմաց է տալիս այդ բանը պոլիցիային: Պոլիցիան ևս այդ պատճառով կրկնապատկում է իր հսկողութիւնը, բայց ոչինչ կատարելի բան չէ նկատում: Խմբի միջոցով և նրան ուղեկցող երիտասարդը, Գօրպատի համալսարանի ուսանողը, կէս գիշերից յետոյ շուտով տուն վերադարձան և պառկեցին ընելու: Հետեւեալ օրը, առաւօտեան 6 ժամին, խմբի միջոցով կանչեց ծառային և հաշիւ պահանջեց նրանից, ասելով թէ ճանապարհ է ընկնելու 8 ժամին: Այդ ժամանակը նրա սենեակը մտաւ պոլիցիան: Խմբի միջոցով ստատիկ վախեցաւ և ժամանակաւորապէս ուշաթափ եղաւ: Ուշից գալով, նա բոլորը խոտովանեց և ցոյց տուեց, որ փողերը թաղցրած ունի չէ՞մօղանում: Պոլիցիան խմբի միջոցով զանազան նրան մերկացնող նամակներ է գտել: Խմբի միջոցով կալանաւորվելու ժամանակ յայտնեց, որ իրան ուղեկցող երիտասարդին ոչինչ յայտնի չէ գործութեան մասին, և խնդրում էր ձեռք չը տալ նրան, բայց պոլիցիան հարկադրված էր կալանաւորել և այդ պատճառով ուղեկցին: Բացի դրանից կալանաւորած են խմբի միջոցով երկու ազգականներին, որոնք այս օրերս նրանից նամակով փող են ստացել 1000 բուրլու: Խմբի միջոցով շատ խելացի մարդու տպաւորութիւն է գործում և բոլորովին նման չէ խելագարի, որպէս առաջ ենթադրում էին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԻՆԱՑԻՔ ԱՄԵՐԻԿԱՅԻՄ

Ամերիկայի Միացեալ-Նահանգների հանրապետութեան սենատը նորերումս վաւերացրեց հանրապետութեան և Չինաստանի մէջ կապված դաշնագրերը, որով չինացիների գաղթելը դէպի Ամերիկա սահմանափակվում է: Նոյնանման շարժում չինացիների դէմ նշմարվում է այժմ և Աւստրալիայում:

Սկզբից Ամերիկայում ուրախութեամբ ընդունում էին չինացի գաղթականներին, որոնք մեծ թիւով էին գաղթում մասնաւոր կալիֆօրնիա, նոյն իսկ ամերիկական հանրապետութեան կառավարութիւնը նպաստում էր չինացիների գաղթելուն դէպի կալիֆօրնիա, որտեղ չինացիները մեծ թիւով գաղթելով, և բանելով շատ չնչին օրավարձով, մեծ օգուտ տուեցին երկրին, կատարելով ամենանշանք աշխատանքներ, ինչպէս օրինակ երկիրը կուտական անտառների մի մասից մաքրել:

Եւ, ճահիճների չորացնելը, հանքերում բանելը և այլն: Բայց սպիտակամորթ բանւորների թիւը հետզհետէ բաղմանալով, և ունենալով կենսական աւելի ընդարձակ և բարդ պահանջներ, քան թէ չինացի կուրի: անուանված բանւորները, որոնք բաւականանում են շատ չնչին օրավարձով, կերակրվում են, հարկաւոր ժամանակ, մինչեւ ուղևորվելով, —սպիտակամորթ բանւորները, կրկնում ենք, սկսեցին թշնամական աչքով նայել չինացիների վրա, որոնք իրանց սակաւապէտութեամբ անգաղար իշեցնում էին բանւորական եկամ թշնամութիւն, անմիջապէս ցոյցեր, բողոքներ չինացիների դէմ: Խնդրեցին մատուցվեցան ամերիկական կառավարութեան վերջ դնելու համար չինացիների գաղթականութեանը դէպի Ամերիկա, նոյն իսկ պատահեցան սպիտակամորթ բանւորների ձեռքով չինացիների սարսափելի կոտորածներ կալիֆօրնիայում:

Ինչ որ զայրացնում է ամերիկացի բանւորներին, այդ պէս է, որ բացի դրանից որ չինացի բանւորները անդադար իշեցնում են, վայր են գցում բանւորական օրավարձի չափը, նրանք իրանց կատարելապէս առանձնացած են պահում ամերիկացի բանւորներից, երբէք չեն ձուլվում նրանց հետ, առանձին տարր են կազմում, երբէք չեն ընտելանում իրանց նոր հայրենիքին, երբէք ամերիկացի չեն դառնում, —այլ փող աշխատելուց յետոյ և ամեն տեսակ զրկանքներ կրելով խնայողութիւն անելուց յետոյ, վերադառնում են Չինաստան, իսկ այնտեղից չինացիների նոր խումբեր են գալիս անդադար, որոնք երկրից օգուտ չաղելուց յետոյ և նոյն երկրին միշտ օտար մընալով, նոյնպէս մի քանի տարուց յետոյ վերադառնում են Չինաստան, կամ եթէ մնում են Ամերիկայում, միշտ թշնամական, առանձնացած դիրք են բռնում բնիկ ամերիկացիների և իւրօպայից եկած սպիտակամորթ բանւորների դէմ:

Այժմ, Ամերիկայի հանրապետութեան նախագահ Կլէվլենդը, ինչպէս և նրա նախորդները՝ Հայս և Արչըր նախագահները, չուզեց որոշել չինացիների դէպի Ամերիկա դաղթականութեան դէմ, առանց այդ խնդիրը հաստատ հիւրերի վրա դնելու: չինական կառավարութեան հետ մի օրինաւոր դաշնագրութիւն կապելով, որով որոշվում է չինացիների դէպի Ամերիկա գաղթականութեան չափն ու սահմանը:

ՄՈՒՇԻ ԴԵՊՐԸ

«Արեւելքի» մէջ կարդում ենք հետևեալ մանրամասնութիւնները հայ-կաթօրիկ եպիսկոպոս Թովմանէսեանի վերաւերելու մասին: «Զատիկի տոներուն առթիւ, ուսուցիչ Գեորգ, որուն վրայ խօսեցանք արդէն, այցելութիւն մը տուած էր առ Գեր. Թովմանէսեան, հաւանքեց տան յատակաձին ուսումնասիրելու համար Ռճրին վերելը, մազկցելով մտաւ հիկեղեցականին ննջանեանակը: Սենեակէն ներս ցատկելու առնել ուսուցչին հանած արկունքն արթնցոց գեպիսկոպոսն, որ, ընդոտ յառնելով, պոռաց.—Մի՛ է, —Ես եմ, պատասխանեց ուսուցիչը:—Ի՞նչ կուզես ինձմէ:—Արիւնք...»

«Զայս բնիկով նետուեցաւ եպիսկոպոսին վրայ և դաշոյնի հարուած մը տուաւ նմա: Եւսմիտմ կուր մը սկսաւ մարդասպանին և եպիսկոպոսին միջև, որ, այս անակնկալ յարձակումէն խելայեղեալ, մտքէն իսկ չէր անցնում օգնութիւն պուռալ և կը շատանար ի դերի հանելու իւր հակառակորդին հարուածները զօրս կուտար իրեն մութին մէջ: Ուսուցչից, կամ երկուդի և կամ ուրիշ պատճառաւ մը, կը պատարաստէր նահանջել, երբ ստիջացաւ և վերադարձաւ լմնցնելու համար իւր գոհին գործը: Գնաց դէպի պատան անկունքն ուր եպիսկոպոսն ապաստանած էր՝ վերջին հարուածը տալու: Եպիսկոպոսը կրցաւ բարեբաղդաբար ճողորկի հարուածէն և դաշոյնն, հետաքրքրական դիպաւածաւ մը, գնաց ծակել նոյն իսկ յարձակութիւնը: Եւսմիտմ ևս անգամ մը արձակեց իւր հակառակորդն և հետաքրքրեց, դէպի պատան հանը դնաց և փողոց իջաւ, ուր հինգ մեղրակիցներ նմա կը սպասէին: Երկու ժամու կաթի նուազած մնալէ յետոյ, եպիսկոպոսն սթափեցաւ և քաջշուքով մինչև պատուհան երթալով, օգնութիւն գոչեց: Խոր աղաղակները լուսեցան հայ ընտանիքէ մը որ եպիսկոպոստան

դիմացի տունը կը բնակի: Խուճապն սկսաւ, վաւերացնելու, արթնցոցելու եպիսկոպոսին երկու սպասաւորներն, և մտան ի սենեակն եպիսկոպոսին որ շատ ցաւալի վիճակի մը մէջ էր: Կառաւ վարչին իմաց տրուելով, անմիջապէս եկաւ և մեծ ծապէս յուզուեցաւ ի տես Գեր. Թովմանէսեանի զոր կը յարգէ, և հարկ եղած դարմանները տալ տուաւ:

«Կառաւարչին հարցմանց պատասխանելով, եպիսկոպոսն ըսաւ թէ ոճրագործը՝ զոր չէր կրցած ճանչնալ մութին մէջ, ինքզինքը վերաւորած էր վերջին հարուածը տալու ժամանակ: Եւսմիտմ օրն հետեցան արեան հեղեղումն որը կանգ կառնուին դպրոցին առջև: Ուսուցչին որ վար իշեց պատասխան տալու համար բանի մը հարցմանց: Այդ մարդը ներկայացաւ, ձեռքը պահած իւր գրպանի միջոց մէջ: Խորիտ պատասխաններ տուաւ իրեն եղած հարցմանց: Հրամայուեցաւ իրեն ցոյց տալ ձեռքը զոր կը պահէր, և հարկադրուեցաւ երանած ծակը դաշն, ձեռքը կապուած էր: Ուսուցչին կանգ մերկացուցին դաշն և ի յայտ բերին վերջը: Ուսուցիչը, տեսնելով որ ամեն բան յայտնուած է, խոտովանեցաւ: Ոճրին հեղինակը լինելն և, իմանալով որ եպիսկոպոսը մեռած չէր, ցաւ յայտնեց: Միմիջապէս ձեռքաւարուեցաւ, կաշկանդուեցաւ և ի բանտ տարուեցաւ:

«Եպիսկոպոսն ստացած է 12 վէրք, որոնց երեքը ծանր են, այլ վտանգի չեն ենթարկել իւր կեանքը: Գեր. Թովմանէսեանի կողմէ իւր Պատրիարքարանին ուղղեալ հեռագիր մը ապահովել լուրեր կուտայ եպիսկոպոսին առողջութեան վերադառնալու համար: Եւսմիտմ ևս անգամ մը անգամ անգամ զօրքը քննելու համար հաղորդակցութեան մտնելով Մուշի դատական իշխանութեանց հետ»:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՅԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 20 մայիսի

Միմօն պէյ Մագսուտ, ատենապետ Քաղաքական Ժողովոյ, հրաժարական տուաւ: Հրաժարականը խրկեց Պատրիարքին, Պատրիարքը չընդունեց հրաժարականը, բայց Միմօն պէյ հրաժարականը ետ չառաւ: Միմօն պէյ առաւօտ խնդիրն այս վիճակի մէջ էր:

Միմօն պէյ կը հրաժարի, վաճառ գի կը դիտէ թէ՛ հետգնետ իր վարկը պիտի կորցնէ ազգին մէջ: Հարուստ, անկախ մարդ, պետական անձնու ծանօթ և անոնց հետ լաւ յարաբերութեան մէջ Միմօն պէյ պէտք էր որ կարենար կարգադրել գէթ մի քանի խնդիրներ, սակայն ոչ մէկ յաջողութիւն ունեցաւ: Եւսմիտմ ինչ հակառակ հրաւ: Ինչ որ Հայաստանէն հարստահարութեանց տեղիկարդեր կուգային ամէն ալ կառավարութեան հաղորդեց, բայց ոչ մէկուն դարման մը եղաւ:—Եւ ամէն օր կը սկսէր ըսել Միմօն պէյ և իւր ընկերները պէտք է որ հրաժարին, քանի որ կառավարութիւնը չուզեր անոնց և Պատրիարքին խօսքերու կարտորութիւն ընծայել: Սակայն Միմօն պէյ խոհմութիւն համարեց պաշտօնի վրայ մնալ, չուզելով կառավարութեան անհաճոյ ցոյցի մը կասկածներն յարուցանել տալ: Բայց պէտք էր չարեաց դարման մը, միջին ճամբայ մը գտնել, որպէս գի ազգին ալ ցաւոցը դէթ փոքր ինչ սփռի դրուի, և մասնաւոր օտար միջամտութեանց դուռ չը բացուի, զի Պատրիարք և Միմօն պէյ չեն ակնթարթ օտար միջամտութիւնը Ժողովը որոշեց, ինչպէս արդէն հաղորդած եմ, առաջարկել կառավարութեան ընտրել յանձնաժողով մը, հայերէ և թիւրքերէ բաղկացեալ, թիւրքերը Գոնէն, հայերը պատրիարքարանէն ընտրուած: Այդ յանձնաժողովը պիտի քննէր հայոց գանգատները և պիտի խորհէր դարմաններուն վրայ: Կրօնական և Քաղաքական Ժողովներու այս առաջարկը մատուցուեցաւ կառավարութեան, պատասխանը մերժողական եղաւ:

Սյայիսի կացութեան մը մէջ Միմօն պէյ ուրիշ բան չէր կրնար ընել, բայց եթէ հրաժարի, ապա թէ ոչ ծանր պատասխանատուութեան ներքե պիտի մնար ազգին առաջ:—Տեսնե՛ք վերջն ի՞նչ պիտի լինի:

Միմօն պէյի հրաժարմամբ Քաղաքական Ժողովն անգործութեան կը դատապարտուի: Արդէն Կրօնական Ժողովոյ պաշտօնավարութեան միջոցն ալ լրացած ըլլալով հրաժարած է: Պատրիարքն ալ աւելի երուստաղէմայ Պատրիարք կը համարուի քան Պօլսոյ, կէս հրաժարուած բան

մէ, առանց ս և է բարոյական ազդեցութեան. Ազգ. Ժողովոյ տարեկան շրջանն ալ լրացած լինելով Ժողովոյ ատենապետն ալ պաշտօնէն դադարած է, որով վերստին կը մասնուէինք անխիտա-նութեան. կատարելապէս կազմալուծեալ էին բո-լոր մարմիններն:

Ինչ և է երէկ Ազգ. Ժողովը գումարեցաւ և ընտրեց նոր ատենապետը, որով զէթ Ազգ. Ժո-ղովոյ օրինաւոր իշխանութիւն մը համարուի: Նոր ատենապետն է տօք. Թրեխաքեան բժիշկը: Պարոնը ուրիշ ատեններ ալ վարած է սոյն պաշ-տօնը:

Տօք. Թրեխաքեան առաջնակարգ բժիշկ է, իւր մի գիւտին համար ոսկի ջըպըրամ ընդունած է ի փառքի: Քաջ հայազէտ է, ինչպէս նաև հմուտ ու-րիշ լեզուաց եւ շանչցողած է ճշմարտապէս ազ-գասէր և ուղիղ մարդ: Նորա ընտրութիւնը ընդ-հանուր գոհունակութիւն պատճառեց: Ամենքս ալ համոզված ենք թէ՛ տօք. Թրեխաքեան ուղղամը-տութեամբ կառավարելով Ազգ. Ժողովը նախա-ւոր պիտի ընծայէ Ժողովին առանց զգուհու-թեան և երկպառակութեան ազդին գործերը տը-նօրինել խելահաս կերպով: Այս տխուր օրերու մէջ տօք. Թրեխաքեան ընտրութիւնը ազդին հա-մար ուրախութիւն մը կրնայ համարուի:

Ազգ. Ժողովն ունի երեք ատենապետ, միւս երկու ատենապետներն են պ. Քրիստոստոսը Ղա-զարոսեան և պ. Մարկոս Աղաբէգեան. Ա. ատե-նապետ ընտրուեցաւ պ. Մկրտիչ Մելիքեան, իւրմ-բազիր «Հայրենիք» շաբաթաթերթի:

Ժողովն այս տարւոյ համար իւր վարիչ մարմի-նը կազմել վերջ զբաղեցաւ Գարուիւն Պատ-րիարքի խնդրով: Գարուիւն Պատրիարքի հրա-ժարականը չէ ընդունուած, լմա, այդպէս թող ըլլայ, սակայն քանի որ Գարուիւն Պատրիարք Պօլիս պիտի մնայ, հարկ է որ լրուստագէտի նոր Պատրիարք մը ընտրուի: Անն այս մտքը կարծիք-ներ յայտնուած էին ազդին մէջ և երէկ մի երես-փոխան ազդին այս կարծեաց թարգման հանդի-սանալով առաջարկ ներկայացուց, որ Գարուիւն Պատրիարքի տեղ ուրիշ եպիսկոպոս մը ընտրուի-կին կարեւորութիւն տալով անցուց իր օրական կարող և յառաջիկայ նիստերուն միտն մէջ ա-ռաջին խնդիրը պիտի ընէ այս:

Բայց չենք գիտեր թէ մինչև այն ատեն խնդիր պիտի մնայ: Գարուիւն Պատրիարք երէկ վերս-տին գնաց Մեծ-Եկարդոսին քով և խնդրեց, որ կայսրը ընդունի իւր հրաժարականը Պօլսոյ Պատ-րիարքութիւնէն: Մեծ-Եկարդոսը խոստացած է Պայրամէն վերջ—մօտ տասն և հինգ օր—աշխա-տել այդ մտքը և Պատրիարքի բաղձնաց գոհա-ցում տալ:

Այս շաբթու կարեւոր դէպքերն ասոնք են: Մուշէն նոր լուր մը չը կայ: Ուրիշ ցաւալի դի-պուած մը պատահեց է հռոմէական հայոց կող-մանէ ի Մուշ: Այնպիսի նողկալի դէպքեր են, զոր գրելու կամը չեմ կրնար ունենալ:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է Մուշեան հրամայել է շո-գեանաւ բանեցնել վանի ծովի վրա Այթմ վանից գրում են Կ. Պօլսի լրագրողներն, որ թէ վանի գաւառի և թէ չորակալ գաւառներ և զիւղերի մէջ բնակող ամեն ազգութիւններ և կրօնի ժո-ղովորդը շատ զոհ է թիւրքաց կառավարութեան կողմից արած այդ կարգադրութիւնից, որովհետև վանի ծովի վրա շոգեանաւերի երթնելովիւնը, շատերի կարծիքով նոր դարադրու կը բանայ վանիցիւների համար, զիւրաքանչիւր առևտրական գործողութիւններն ու յարաբերութիւնները երկրի մէջ, զիւրաքանչիւր և փոստի երթնելովիւնը, որը ձեռն ժամանակ, ճանապարհներ իրական պատ-ճառով, առհասարակ սաստիկ դժուարացած էր լինում:

—Նիւրառ գետի յորդման առիթով Կ. Պօլսի լրագրողներն հասած հեռագրական տեղեկութիւն-ներն նայելով ի՞նչ ասված գիւղի կամուրջը, որ երեք տարուց ի վեր չիմպած էր, կործանվել է և չըրեր բաւական վնաս են պատճառել այդ գիւղի շրջակայներն: Նմանապէս Ալիսի հին կամուրջը, որ 60 տարուց առաջ է շինված, և բազմաթիւ յորդումներն զիւրաքանչիւր արդէն, այժմ կոր-ծանվել է:

—Գերմանական լրագրողներում կարդում ենք

որ Բրազիլիայում ստրկութեան վերացնելու ան-միջական հետեանքը այն կը լինի, որ երեկ այս տարի կաթիլ հոնձը Բրազիլիայում շատ անաջող-կը լինի: Կաթիլ Բրազիլիայի բնական բերքերի ա-մենամեծ հարստութիւնն է և արտահանութեան ա-մենանշանաւոր առարկան: Եւ որովհետև կաթիլը պլանտացիաները մշակվում էին ճորտերի ձեռքով, այս տարի ճորտերի ազատութեան պատճառով կը պակասեն աշխատող ձեռքերը, մինչև որ նոյն մշակութիւնը կը կատարվի կամաւոր կերպով վարձով մշակների ձեռքով:

—Գերմանական Բուլանթէ վճարում է իր ընկա-րանին, որ գտնվում է Փարիզի «Գիւմուս-Գիւմուս» փողոցում, տարեկան 10,000 Ֆրանկ: Այդ ընա-կարանում նա ինքն է ապրում, իսկ իր ժամա-նակաւոր կառավարութեան նիստը գտնվում է «Սալ» փողոցում: Այդտեղ գտնվում են Բուլանթէի ռեփակային միւստրուկիւններն ալ և այլ բաժին-ները, ինչպէս ներքին և արտաքին գործերի, ար-դարադատութեան, ֆինանսների, պատերազմի, առևտրի, գիւղատնտեսութեան և այլն իւրաքան-չիւր բաժինը ունի իր միւստրը, Բուլանթէի բարեկամները: Նա ունի և երկու անձնակա-ն զարտուղարներ: մինը տեղեկութիւններն, միւսը թղթակցութիւններն համար: Հաղորդում են որ շուտով կը սկսեն լոյս տեսնել չորս հատ ընկա-րեան նոր լրագրիւնը. «Révision» որի խմբագիր-ները կը լինեն Տիւրկէ և Պէրամուս, «Presse», Լազէր և Լօր խմբագրիւններով, «Peuple» Միշլէն և Լէզան խմբագրիւններով և «Combat» լրագիրը, որը կը խմբագրեն Գիւրուէ և Թիքո:

—Պրոֆէսոր Վիրիսով, որը այս օրերս վերադար-ձել է Բեռլին, ուսումնական նպատակով Եգիպ-տոսում իր արած ճանապարհորդութիւնից, կրկին խոշորացոյցով հետազոտեց, բժշկապետ Մէկէնդիի խնդրեցով, գերմանական կայսրի հիւանդ կոկորդի-հիւթը և յայտնեց որ այդ հիւթը, մէջ քաղցկեղի (սեղեգեմոն) հետքերը չը գտաւ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հին ժամանակներում չինացիք հետեանալ սովո-րութիւններն ունէին: Չինացիք, երբ հասնում էր 40 տարեկան հասակին, նա արդէն առնում էր իր համար մի փայտեայ դազալ և ծածկում էր դրսից և ներսից դազալի պատերը մի առանձին բազալով թափում, որի դաշտիւրը այժմ կորած է: Չինաստանում Այդպիսով քանի երկար էր ապ-րում դազալի տէրը, այնքան պնդանում էր դա-զալը, որովհետև յիշեալ բազալով թափելը յատ-կութիւն ունէր հետզհետէ պնդանալու և քարի պնդութեան համեմատ: Այնուհետև երբ չինացիք մեծանում էր, նրան դնում էին այդ դազալի մէջ և սնդիկ էին ածում դազալը ևս այսպէս թա-ղում ննջեցնալին: Միգիլը ծծվելով մարմնի մէջ, ցնում էր մարմնի բոլոր երակները և սաստիկ պնդացնում էր ու շատ լաւ պահպանում էր դի-պալը, այնպէս որ երբ բաց էին անում հին չինա-կան դազալները, նոյն իսկ մի քանի հարիւր տարուց յետոյ, դիակները շատ լաւ պահպանված էին գտնում այդ տեսակ դազալներում:

Մի եւրոպացի հեղինակ հետեանալ կերպով է նկարագրում կնոջ քնաւորութիւնը, առհասարակ, ցոյց տալով թէ կնոջ հետզհետէ իր մանկական հասակից սկսած ինչ քանի վրա է մտածում: Չորս տարեկան հասակում փոքրիկ աղջիկը մտա-ծում է միմիայն կօսի ֆէ տնեւրի մասին, եթէ տարեկան հասակում խաղալիքներն և տիկին ի մասին, տասն և երեք տարեկան հասակում նա գիշեր ցերեկ մտածում է իր մի որ և է աղքա-կան փոքրիկ աղջկի մասին, տասն և ութ տա-րեկան հասակում նա արդէն մտածում է ա-մուսնուած թեւեւ մասին, քսան և հինգ տա-րեկան հասակում նրա մտածողութեան միակ ա-ռարկան իր նորածին մանուկն է, երեսուն և հինգ տարեկան հասակում նրա հոգեւոր առար-կան իր մազերում երեկեղծ առաջին սպիտակ մազն է, քառասուն տարեկան հասակում նա գիշեր ցերեկ տանջվում է այն ճիւղի, որ իր ե-րեք վրա երեկեղծ առաջին կն ծնունդը, ի-րօտն տարեկան հասակում նա մտածում է իր անցեալի մասին, և վերջապէս վաթսուս տարեկան հասակում նա մտածում է միմիայն իր հօգոս. փոքրիկ եւսն և իր խոստովա-նած օր մասին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի «Тражанин» լրա-գիրը հաղորդում է, որ հրէական յանձնաժողովի կողմից մշակված ծրագիրը նոր օրինադրի մասին վաշխառութիւնն վերաբերմամբ՝ ներկայացրած է այժմ արդարադատութեան մինիստրի հայեցողու-

թեանը, և լուրերին նայելով, շուտով առաջարկ-վելու է պետական խորհրդի քննութեանը:

ՓԱՐԻԶ, 24 մայիսի: Բուլանթէ, սահմանադրու-թեան վերաքննութեան մասին իր առաջարկու-թիւնը ձևակերպելով ասեց, որ Ֆրանսիային սպառնում է վտանգաւոր ճգնաժամ, զլիսաւորա-պէս այն պատճառով, որ հանրապետութիւնը սե-փականութիւն է դարձել մարդկանց մի յայտնի խմբի և ոչ թէ բոլոր քաղաքացիներին: Դրանով հետեւորը բացատրում է այն հանգամանքը, որ իր անուան շուրջը խմբվել են այլ և այլ համոզ-մունքների տէր մարդիկ: Այնուհետև Բուլանթէ ապացուցանում էր, որ պարլամենտարիզմը ծնեց-րեց յանցաւոր ձգտումներ. պարլամենտը անգա-մալով է անում բարի մտադրութիւններ, քանի որ նա բաժանվում է խմբերի, որոնցից իւրաքանչիւ-րը հետեւում է միմիայն իր շրջանի նեղ շահերին: Ապա Բուլանթէ սկսեց խօսել միւստրների մա-սին, որոնք օգտվում են պետական փողերից, ըն-տրութիւնների ժամանակ ձայներ ձեռք բերելու համար: Նախագահը հրաւիրեց Բուլանթէին յետ առնել իր խօսքերը, սակայն Բուլանթէ յայտնեց, որ ինքն դիտարկութիւն չունէր յարձակվել իր ընկերների վրա (լավում է աղմուկ): Բուլանթէ հարցնում է, արդեօք հարկաւոր է հանրապետու-թեան նախագահ և աւելացնում է, որ իր կար-ծիքով Ֆրանսիան շատ լաւ կարող է գոյութիւն ունենալ առանց նախագահի (աղմուկը աւելա-նում է): Նախագահը յիշեցնում է Բուլանթէին, որ հէրը է յարձակումներ գործել և աւելացնում է. «մենք ունենք կանոնաւոր կառավարութիւն և օրէնքներ»: Բուլանթէ պատասխանում է. «Վե-րանորոգված Ֆրանսիան, որը դրականապէս կը դործի օտար պետութիւնների հետ իր ունեցած յարաբերութիւններում և որը կը յիմար հօրը դործի վրա, կը հանդիսանայ եւրոպական խաղա-դութեան համար լաւագոյն երաշխաւորութիւն, այն ինչ այժման պարլամենտը անկարող է առ-կերպին այդ տեսակ կազմակերպութիւն. նա պէտք է ակնալ զնի երկրի ցանկութեանը, որը անդադար աղաղակում է նրա լուծման մասին: Իր ճառախօսութիւնը Բուլանթէ աւարտեց կարդա-լով մի ծրագիր սահմանադրութեան վերաքննու-թեան և պարլամենտի լուծման մասին: Ժողովը, 377 ձայնների առաւելութեամբ ընդդէմ 186 ձայնի մերժեց Բուլանթէի առաջարկութեան քննութիւ-նը անյետաձգելի համարել Ժողովի նախագահ Ֆլուկէ, պատասխանելով Բուլանթէին, ասեց որ կառավարութիւնը մերժում է սահմանադրութեան վերաքննութեան անյետաձգելի լինելը և որ ալ-կերպ և թէ Բուլանթէ այն պատճառով է շտա-պում այդ առաջարկութիւնն անելու, որպէս զի չարժանանայ «ճիւղակի-դիտարկութիւն» անուանա-կոչութեան: Այդ նկատողութիւնը ծիծաղ յարու-ցեց և առաջ բերեց վիճաբանութիւն Ֆլուկէի և Բուլանթէի մէջ: Ժողովը, առաւելութեամբ 335 ձայնների ընդդէմ 170 ձայնի, որոշեց հրատարա-կել և տարածել ամբողջ Ֆրանսիայում Ֆլուկէի ճառը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մայիսի: Մայիսի 24-ին Կե-նիգրեքերում վախճանվեցաւ վերաբերութեան պրօֆէսոր Մոնաստրիսկի: «Новое Время» լրա-գիրը հաղորդում է, որ երկաթուղիների կողմից հացի բեռների փոխարէն փոխաւորութիւն տալու առաջարկութիւնը, պետական բանկի երաշխաւ-րութեամբ, լավում էր պետական խորհրդում, որը ենթադրում է թող առաջ բանկին իր բաժանմունք-ներով փոխաւորութիւն տալ սրանից յետոյ հացի բեռների փոխարէն երեք տարի ժամանակով: «Варж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ «Մալ-ցէվսկի» առևտրա-արդիւնաբերական ընկերու-թեան անանկութեան գործը այնպիսի ընթացք ստացաւ, որ շուտով կարելի է սպասել պաշտո-նական յայտարարութեան հրատարակվելուն: սը-նանկութիւնը ոչնչացնելու մասին:

ԼՕՆԴՈՆ, 26 մայիսի: Անգլիական բանկը իջեց-րեց դիվիդենդ 3-ից մինչև 2 1/2%:

Կ. ՊՈԼԻՍ, 26 մայիսի: Մեր դեսպանը յիշեց-րեց Բ. Գրանը, թէ Թիւրքիան մօտ 20 միլիոն կօնտրիլլուցիա է պարտական Ռուսաստանին, և որ այդ պարտքի վճարումը հարկաւոր է ապահո-վել: Պարտքը յիշեցնելուն առիթ տուեց այն հան-դամանքը, որ Բ. Գրանը ապահովագրեց Թիւրքի-այի ամենատար կրէդիտորներին:

ԲԵՐԼԻՆ, 26 մայիսի: Հրատարակված է մի օ-րէնք, որով պրուսական սէյմի օրէնսդրական ե-ռամսայ շրջանի փոխարէն՝ հնգամսայ շրջան է նշանակվում Որովհետև այդ միջոցը համապա-

տասխանում է Բիսմարկի հայացքներին, այդ պատճառով կարծում են, թէ միւստրական ճգ-նաժամի մասին խօսակցութիւնները կը վերջա-նան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի (Ուշագած հեռագիր): Հրատարակված է պետական խորհրդի կարծիքը այն պատիժների մասին, որոնք նշանակվում են օտար անտառներից փայտ կտրելու և փայտ գո-ղանալու համար: Մեղաւորները ենթարկվում են՝ առաջին անգամ 50 րուբլուց ոչ բարձր տուգանքի. երկրորդ անգամ՝ կալանաւորութեան, 3 ամսից ոչ աւելի, իսկ երրորդ և հետեւեալ անգամները՝ բան-տարկութեան 1 ամսից մինչև 6 ամիս ժամանա-կով: Բացի սրանից մեղաւորները պարտաւոր են վճարել կրկնակի արժեքը՝ յափշտակված, ինքնա-կամ կտրած, վնասված, կամ ապօրինաբար ձեռք բերած փայտի Գափշտակված փայտը խլելու է և վերադարձվում է անտառատիրոջ: Սենատը դոն-փակ քննելով «Новое Время» լրագրի խմբա-գիր Ֆեօդորովի բողոքը դատաստանական պալա-տի վճռի դէմ, որը դատապարտել էր նրան վեց շաբաթ բանտարկութեան հաւաքովախառում և 300 րուբլու տուգանքի, Պետերբուրգի գերմանա-կան զինուորական գործակալատար Վիլիմի պա-տիւրը վիրաւորող թղթակցութիւն տպելու համար, հաստատեց պալատի վճիռը:

ՎԻԵՆԱ, 24 մայիսի: Աւստրիական կառա-վարութիւնը թոյլ տուեց արտասահման տանել ձիաները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մայիսի «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ զէմստօլի զլիսաւորնե-րի մասին պետական խորհրդին առաջարկած նա-խագծի պատճառով տարաձայնութիւն առաջա-ցաւ: Այդ նախագիծը համապատասխան փոփոխու-թիւններով նորից կառաւարկվել պետական խոր-հրդի աշխատալին նստաշրջանին:

ՄՕՍԿՎԱ, 25 մայիսի: Երէկ նահանգական դա-տարանում սկսվեց 57 հոգուց բաղկացած մի խմբի գործը: Վերոյիշեալ անձինք չինում և տա-րածում էին 25 րուբլիանոց կեղծ թղթադրամներ, արծաթէ դրամներ և Մոսկվայի կալուածական բանկի կուպոնները: Մօտ 200 վկաներ կան:

ՀՌՕՄ, 25 մայիսի: Նախկին սպանիական թա-գաւոր, իշխան Ալեքէյ, որը այրի է, նշանված է իշխան Նապօլէօնի աղջկայ՝ իշխանուհի Լէտիցիա Բօնապարտի հետ:

ՏՄԵՐԵՆՏ, 27 մայիսի: Կանադայից 70 վերստ հեռու գտնված է աղի առողջարար ծովալի:

ՍՕՖԻԱ, 27 մայիսի: Զօրքին միջերեսներ հայ-թայթոնները սպառնում են, որ եթէ փողերը չեն ստանայ, կը դադարեցնեն զօրքին միջերեսներ հայթայթելը:

ԼՕՆԴՈՆ, 27 մայիսի: Կամաւորները բառա-ւիճաններից բերդադաններ են կազմակերպվում և բրիգադաների հրամանատարներ արդէն նշանակ-ված են:

ՓԱՐԻԶ, 27 մայիսի: Երէկ պատգամաւորների ժողովում Ֆլուկէ ասեց, թէ ընդհանրապէս ընտ-րութիւնների հետեանքները բարեկամող են հան-րապետականների համար:

ԲԻՒՆԵԼ, 27 մայիսի: Երէկ այստեղ համաշ-խարհային հանդէսը բացվեցաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 24-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	113	р.	80	>
Համբուրգի վրա 100 մարկ —	56	>	45	>
Փարիզի վրա 100 ֆրանկ —	44	>	95	>
Ոսկի — արծէ —	9	>	20	>
Մաքսային կուպոններ —	182	>	75	>
Արծաթ —	1	>	39	>
Բօրսային դիվիդենդներ —	6 1/8	>	7 1/8	>
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի 98	>	87	>	>
— — — — — 2-րդ —	98	>	25	>
— — — — — 3-րդ —	98	>	25	>
— — — — — 4-րդ —	98	>	50	>
— — — — — 5-րդ —	98	>	37	>
— — — — — 6-րդ —	—	>	—	>
Նոր 4% փոխաւորութիւն.	82	>	50	>
Արեւելեան 5% փոխաւորութ. 1-ին շրջ. 100	>	—	>	>
— — — — — 2-րդ —	99	>	—	>
— — — — — 3-րդ —	99	>	25	>
Ներքին 5% առաջին փոխաւորութ. —	273	>	75	>
— — — — — երկրորդ —	244	>	75	>
5 1/2% րէնտա	103	>	—	>
Ոսկեայ րէնտա	199	>	—	>
Եթերորդ կօնսոլիդացած փոխաւոր-ութիւն.	167	>	12	>
Նոր երկաթուղային րէնտա	98	>	75	>
5% գրուական թղթերի կուպոն. —	169	>	—	>
— — — — — փոխ. կրեդ. ընկ.	169	>	—	>

Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	97 > 75 >	Վ. օրժակ-Կառնի բանկի ակցիաները 695 > — >	—
51/2% Գրաւական թղթեր խորանարդ	99 > — >	Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 273 > — >	—
Կալուած. բանկի.	101 > 25 >	Իրիւնակ-Վ. օրժակ ընկ.	82 > 25 >
60% Գրաւակ. թղ. Խաղաղութի կալ. բան. .	101 > — >	Ս. Պետերբուրգի քաղաքային օրդն-	—
— Պոլտավայի — — — — —	101 > — >	գացիւններ.	94 > 75 >
— Պետ. Տուրակ. — — — — —	101 > — >	Մոսկովայի քաղաք. օրդնագրիւններ .	95 > — >
— Կիւնովի — — — — —	100 > 50 >	Օդէսայի — — — — —	94 > — >
— Մոսկովայի — — — — —	100 > 75 >	Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օ. . .	— > — >
— Բեսարաբ. Տարկ. — — — — —	100 > 50 >	Ս. Պետերբուրգի բոքսայի տրամադրութիւնը	— > — >
— Երթ. Սամար. — — — — —	101 > — >	ամուր է:	— > — >
— Վիլնայի — — — — —	101 > — >		
— Թիֆլիսի — 27 և 43 տ. — — — — —	— > — >		
— Բուխարայի — 18 և 43 տ. — — — — —	— > — >		

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՈՐ ՀԻՄՆԵՐԱՆՈՅ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻՅԱՆՑԻ

(Կուկիւա, վարձնօրի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր

Ա. Ռ. Ա. ԻՕՏՆԵՐԸ

ՐՈՒԿԿՈՎՍԿԻ—10—11 Ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
Կիւն-բժիշկ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ 11—12 Ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 Ժ. ականջների, կոկորդի, սիֆիլիսի և առամների ց.
ՍՕՔՕՔԵՎ—11—12 Ժ. առամներու ց.
Ա. ԳՈՒՐԿՈ—12—1 Ժ. աչքի, ներքին և մանկական ց.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 Ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 Ժ. ներքին և երեխայոց ց. ամէն օր, բացի երեքշաբթի և ուրբաթ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ՉԱԿԵՎՍԿԻ—5—7 Ժ. ջրային ց. և էլէկտր-տեղապահ.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 Ժ. ներքին և երեխայոց ց.
Հիւանդանոցում է մանկաբարձուհի Գ. Օ. Գ. ԵՐԻ
ՎՃԱՐ—50 Կ. Համախորհրդի (Կոնսիլիումի) համար համաձայնութեամբ: Մշտա-
կան անկողիններ.

Հիւանդանոցի փոխ-վերահսկող ԲՈՒԿԿՈՎՍԿԻ

Թիֆլիսի Միքայէլեան կամուրջի վրա, նախկին Միրզոբի տուն, № 48

Մի քանի օր միայն իրան ցոյց կը տայ

Հ Ն Դ Ն Ո Ւ Հ Ի

ՕՐԻՈՐԴ ՊԱՍՏՐԷԼ

որի երեսը և ձեռքերը ՍՊԵՏԱԿ են, իսկ մարմնի մնացած մասերը ՍԵՒ են և մագնիսով ծածկված:

Մուտքը արժէ՝ առաջին տեղը 40 կօպ., երկրորդը՝ 20 կօպ.: Հանդէսը բաց է առաւօտեան 10 ժամից մինչև 1 ժամ, և երեկոյեան 5 ժամից մինչև 10 ժամ:

Կառավարէ ՄՕԼԼԵ

Թիֆլիսի Իգլան Գիմնազիայում ուսում ստացած մի ՕՐԻՈՐԴ, որ իր ուսումը աւարտել է Գայեանեան օրիորդական դպրոցում, կամենում է մասնաւոր դասեր տալ Թիֆլիսի ընտանիքներում, պատրաստելով երկու սեռի երեխաներին մինչև Գիմնազիայի 3-րդ դասատուը

Հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը:

1—5

Յանձն եմ առնում ՆՈՐ-ԲԱՅԱՑԵՏՈՒՄ՝ վաճառելու հայերէն և ռուսերէն ամեն տեսակ զրբեր: Հասցէն. НОВО-БАЯЗЕТЪ Степану Батикъ.

1—5 (Ե)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖԱՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, յունիսի 9-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Ռիւս, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմօնիլուի տան, Նաբիլէֆնայա, և Թիֆլիսում՝ նախկին Արժուրի դպրեւան, № 103.

1—4

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
ՊԱԿԵԲՈՏ-ՓՈՏԵ ՖՐԱՆԿԱՅ.

ՖԱՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 3/15 յունիսի ԲԱՌՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ LE TIGRE (ՏԻԳՐ) նաւապետ FABRE (ՖԱԲՐ) մտնելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրաս

Ազնաները՝ ԲԱՌՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԵՐ, իսկ ԹԻՖԼԻՍԻՄ՝ ԳԵՈՐԳ ԶԵՋՈՒԹԵԱՆ

1—3

ՅՈՎՆԱՆԵԱՆ-ՄԱՐԻՍԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ԴՊՐՈՑՑ ԱՌԱՐՏԱՄ ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ մի քանի տարի է արդէն ՎԱՐՈՒՆԻՈՒ ՊԱՇՏՈՆ է ՎԱՐՍԵԼ, ցանկանում է դասեր ունենալ ընտանիքներում, թէ ԹԻՖԼԻՍԻՄ և թէ ԳԱՆԱՌՆԵՐՈՒՄ: Կարող է պարապել փոքրահասակ երեխաների հետ Փրեօբլեան սիստեմայով ևս: Համաձայն է նոյնպէս և ընտանիքներում ապրել երեխաներին դաստիարակելու համար: Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը:

4—5

ԵՐԵՒԱՆԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի տեղեկութիւն համայնից, որ քաղաքային խորհրդարանը 29-ն սեպտեմբերի 1887 և 15 մարտի 1888 թւականների կայացրած վճիռներով կարգադրել է:

1) Խորհրդարանի առաջիկայ 1888—1892 քառամեակի ձայնաւորներ ընտրելու մասին կազմել քաղաքային ընտրողական ժողովներ, առաջին կարգի համար 20-ին, երկրորդ կարգի 24-ին և երրորդ կարգի 28-ին հոկտեմբերի 1888 ամի:

2) Ձը պահահանջել կալուածատերերից նրանց կալուածների վրա 1864 թւից ըսկած մինչև 1879 ամի մնացած քաղաքին հասանելի ապառիկները:

3) Ձը պահահանջել կալուածատերերից այն տուգանքը որ նրանք պէտք է վճարէին քաղաքի օգտին կալուածներից հասանելի 10% տուրքը իր ժամանակին չը վճարելու համար մինչև 29-ն սեպտեմբերի 1887 ամի, բացի այս չը պահահանջել այս տեսակ տուգանքը 29-ից սեպտեմբերի 1887 ամի մինչև խորհրդարանի նոր կազմակերպելին:

4) Ընտրողական ցուցակներն աւարտել մինչև օգոստոսի 20-ն 1888 ամի:

5) Վարչութեան պատրաստած ընտրողական ցուցակներն յայտնել ի տեղեկութիւն համայնից օգոստոսի քսանին 1888 ամի բաժանելով քաղաքացիներին, նմանապէս կպցնելով քաղաքի յայտնի տեղերում և խորհրդարանի դահլիճում 200 օրինակ տպված յայտարարութիւններ:

և 6) Քաղաքի բնակչաց զանգաններն ընտրողական ցուցակների մէջ թող տուած սխալանաց մասին ընդունել քաղաքային վարչութիւնում օգոստոսի քսանից մինչև երեքըն սեպտեմբերի և այնուհետև համաձայն 27-որդ յօդ. քաղաքային կանոնադրութեան ուղղված ընտրողական ցուցակներն ներկայացնել խորհրդարանի հաստատութեանը անշուշտ մինչև ց16-ն սեպտեմբերի 1888 ամի:

Ընդ մին քաղաքային վարչութիւնը հարկաւոր է համարում զգուշացնել քաղաքի բնակիչներին թէ թէպէտ սոյն յայտարարութեան 4-րդ հատուածում յիշած ընտրողական ցուցակների աւարտելն խորհրդարանը նշանակել է 20-ին օգոստոսի 1888 ամի և այդ ընտրողական ցուցակների մէջ համաձայն 4-րդ հատուածի 17 յօդուածոյ քաղաքային կանոնադրութեան, անկարելի է մոցնել քաղաքի այն բնակիչներին որոնց վրա մինչև յիշեալ ժամանակը մնացած կը լինին ապառիկներ քաղաքին հասանելի տուրքերից, բայց համաձայն հրամանի պետական սենատի 5 փետրվարի 1885 ամի № 1312, որով բացատրված է քաղաքային կանոնադրութեան 17-րդ յօդուածի իսկական միտքը, յիշեալ բնակիչներն պէտք է մոցնվեն ընտրողական ցուցակների մէջ 20 օգոստոսի 1888 ամի ժամանակից յետոյ էլ, միայն այն պայմանով, եթէ նրանք կը վճարեն իրանց վրա մնացած ապառիկներն մինչև այն ժամանակ, երբ քաղաքային խորհրդարանը վերջապէս կը հաստատէ ընտրողական ցուցակներն:

2—3

ԴԵՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍՏԱՆԵՐԻ ԵՒ ՄԵԲԵԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

Միջի-փողոցի անկիւնում (երկրորդ տուն, դէպի աջ կողմ՝ Երևանեան հրապարակից), Նարինանովի տանը ԲԱՅՎԱՅԵ Ե ԵՐԿՐՈՐԴ ՊԱՇԵՍ ԿԵՐՈՍԻՆԷ ՄԱՍ ՄԱՍ ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ ՀԱՄԱՐ: Մեր ստացած կերօսինը տարբերվում է իր յատկութեամբ Թիֆլիսում մաս մաս ծախվող կերօսինից: Նա հոտ չունի և կատարելապէս անվտանգ է:

ԳՆԵՐԸ ՉԱՓԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՄԱՏ ԲԱԳՈՒՄ ՎԱՃԱՌԱՆՈՅԻ ԳՆԵՐԻՆ:

Ծառաների կողմից խաբեւայութեան առաջն առնելու համար իւրաքանչիւր ծառային, որ գալիս է կերօսին առնելու, տրվում է մի ՄԱՐԿԱ «E. A. Цатуровъ. Керосинъ» գրութեամբ:

Առաջին պահեստը. ՎՕՐՈՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՄՕՏ, Պալլոսկու բժշկարանի կողքին: Արքունի և հասարակական հիմնարկութիւնները կարող են կերօսին ստանալ առանձին զրբոյով և վճարել ամէն ամիս:

16—25 (Ե. Ե.)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Լ Է Օ

ՊԱՆԳՈՒԻՏ

Գինն է 15 կօպէկ վաճառվում է ԲԱԳՈՒՍՏԻՍ ԳԻՐԿԱՆ ԳՈՆԴԱՂԱՍՏԵԱՆԻ մօտ, ՇՈՒՇԻ՝ Անդրեաս ԱՐԱՎԱՄԵԱՆԻ մօտ:

4—8

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՏԻԻ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ

ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱՐԲԱՅՈՒԹԻՒՆՑ

Այդ էլիկսիրը հնարել է 1373 թւին վանահայր ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՍՈ:

Այդ էլիկսիրի մի քանի կաթիլներն ամենօրեայ գործածութիւնը պահպանում է առամները փշանայուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդը և թարմացնում է բերանը:

Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաստում են դարձաւ ԱՏԱՄԱՓՈՇԵՒ և ՊԱՍՏԱ առամներ սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բերել ամեն փոքր ի շատէ նշանաւոր դեղատներում, ինչպէս և դեղատան ապրանքների պահեստներում ու պարֆիւմերական մագաղիկներում:

ԳԼԽԱՌՈՐ ԱԿԷՆՏ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106.

15—30 (Ե.)

ՄԻ ՀԱՅ ՎԱՐՈՒՆԻ

որ սովորել է Գայեանեան օրիորդաց դպրոցում, ցանկանում է դասեր ունենալ տներում կամ ուսումնարաններում: Հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը:

3—4